Առած ու սիրով տարած՝ իւր ծոցուն տէր մի է դըրած.
Իւր ծոցն է լուսով լըցած, իւր նըման իսկի չէ ծընած.
Աշխարհս օրինակ առած ’ւ իր նըման իսկի չէ գըտած:

Բ.

Գիշերս ես ի խումս էի, խումս ի ձեր դռկանց ի վերայ.
Իմ եարս ալ կանգնած տեսայ իր ճուհար անձկանց ի վերայ.
Իլից ինձ գաւաթ ’ւ երետ իր մոմէ մատկանցն ի վերայ:
– Կամ ա՛ռ կամ խապար արա՛, կամ գըրէ՛ անձըս քեզ ծառայ.
–Ո՛չ կ’առնում խապար կ’անեմ, ո՛չ գըրեմ զանձըս քեզ ծառայ:

Գ.

Ոնց որ գիրկուծոց էաք, նենգաւոր հաւըն խօսեցաւ.
Դանակ, շամփուր ան հաւին, բարկ կըրակ որ զինք խորովէ.
Առնումք զինք լեռկունքն ելլենք, զինք տիքամ տիքամ բաժանենք,
Տիքամ տիքամ բաժանենք, ես ու իմ եարըս մէն ուտենք,
Ոսկորքն ալ տաճար շինենք, իր թեպուրն ան տաճրին աճար:

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Պլպուլն ի թըփին նստեր ֆըրիատ ու տատ կու կանչէ:
Քան զիս պզտիկիկ ձագուկ հաւն զիմ դուսան չի քաշէ.
Տարին տասներկու ամիս փուշըն զիմ կաշին կու մաշէ.
Ըզվարդն ի թըփին բերեն, գայ ամէն անգէտ զնա քաղէ:

Բ.

Մէկ մարդ մի զփէտատն ունի ու զվարդին տակըն կու փորէ.
Պլպուլն ի վարդին սիրուն զիւր վըզի՛կըն դէմ կու բերէ.
Վարդն ալ ի թըփին միջին սուտ ի քուն ու զայն կու լըսէ.
Դարձեալ պատասխան երետ՝ «Քու աղէկն Աստուած վըճարէ»: